

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ



ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

49^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 9

26 ՓԵՏՐՈՒԱՐ 1900

Մասիս շաբաթաբերքի տարեկան բաժանորդագիրն է կես օսմ. ոսկի թե՛ Կ. Պոլսոյ եւ թե՛ գաւառներուն համար, կանխիկ : Արտասահման՝ 12 ֆրանկ : Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկէն :

Մասիս հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու, եւ կը գտնուի Բերայի բոլոր ծխափանառներուն ու Պահչե-Գաբուի ջրալահառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաթիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրալահառներուն հոյ :

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

Հ Ա Ս Ց Ի

ԽՍԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Ղալաթիա, Նորաստուկեան Խան, Թիւ 13

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople



Է Գ Ի Թ Ա Պ Լ

Ամերիկեան Ապահովագրական Ընկերութիւն

ԱՇԽԱՐՀԻՍ ԷՆ ՀԱՐՈՒՍՏ ԵՒ ԷՆ ՀԶՈՐԸ

Տնօրէն Թուրիոյ ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Պոլիս, Անանիասի խան

Ի դեպ մահու ապահովագրութիւն

Միայն 20 տարեվճարով

Մահուան պարագային տարեվճարը կը դադրի

(VIE 20 PRIMES)

Օ Ր Ի Ն Ա Կ

Տարեք 35, դումար 100,000 Ֆրանք ի դէպ մահու վճարելի

Յրանաւան ընկերութեանց թարիֆին համաձայն տարեվճարն է	Ֆր.	4140
Էֆիթապը ընկերութեան թարիֆին համաձայն տարեվճարն է	»	3408
Տարեկան տարբերութիւն ի նպաստ էքիթապի	»	732
20 տարուան մէջ տարբերութիւն ի նպաստ էքիթապի	»	14640
100 ին 5 էն բազադրեալ տոկոսով	»	25414

Այսինքն աւելի քան 6 տարեվճարի խնայողութիւն մը Ի Ն Պ Ա Ս Տ Է Գ Ի Թ Ա Պ Լ Ի

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Զ Ե Կ Ո Յ Ց

Թեւ մեր առաջին յայտարարութեամբ ծանուցած էինք քե Մասիսի բաժանորդագրութիւնները 1900 Յունուար 1է միայն կը հաշուուին, բայց յունուարի մէջ հրատարակուած հինգ քիւեր բոլորովին սպառած ըլլալուն պահաւաճ հարկադրուած ենք գործնական բարեփոխում մը ընել, ամեն ամսոյ 1էն բաժանորդագրութիւն ընդունելով, — միշտ մեկ տարուան համար սակայն: Այս կերպով պիտի կրնանք գոհացում տալ յաջորդաբար հասնող յանձնարարութիւններուն:

Գ Ե Ղ Ա Ր Ա Ն “Ն Օ Ռ Մ Ա Լ”

192 ԲԵՐԱ ՄԵԾ-ՓՈՂՈՑ 192

Բերայի կեդրոնը, եւ «Սիթէ աը Բերա» շէնքին անկիւնը հաստատուած այս նոր զեղաբանը որ զեղագործութեան արուեստին ամէն կատարելութիւններով օժտուած է, իր զեղերուն զտութեամբ, թարմութեամբ եւ գիւրամատչելի գիներով օգտակարապէս կը ներկայանայ կրկին հասարակութեան եւ իր վաղեմի յաճախորդներուն:

Դեղարանին աէրը՝ Հ. Էմիրդէհան՝ քանի տարիներէ ի վեր ծանօթ է Կ. Պոլսոյ Սուլթան Մահմուտի զամբարանին գիմաց իր ունեցած մեծ զեղարանովը զոր ամբողջովին ծախած եւ այս նորը հիմնած է:

Դեղարանին վրայ խորհրդակցութեան սենեակ մը յարգելի բժիշկներուն արամադրութեա ներքէն զրուած է եւ զեղարանը մինչեւ կէս գիշեր բաց է:

Վ Ի Պ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր

Լեւոն Սեդրոսեանի (Շանթ) վէպերը կը ծախուին բոլոր գրավաճառներուն քով հետեւեալ գիներով.

ԵՐԱԶ ՕՐԵՐ	(1896)	6 զրուշ
ԴՈՒՐՍԵՑՆԵՐ	(1897)	7 »
ՎԵՐԺԻՆ	(1898)	8 »
ԴԱՐԶ	(1899)	6 »

Կեդրոնատեղին է Զարդարեան Գրատուն, Զագմաքճըլար: Թղթատարով ուղղոնները պէտք է 40 փարա աւելի վճարեն իւրաքանչիւր հատորի համար:

ՄԱՍԻՆ

49րդ ՏԱՐԻ

— 26 փԵՏՐՈՒԱՐ 1900 —

ՅԻՒ 9

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կտակի մը շուրջը. ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. — Փուխք գերմանական բանաստեղծութեանց Հոգևոյ հիւանդ (Լը-նաու). Լոուէլայ (Հ. Հանէ). Թարգմ. Ռ. Յ. ՊէրՊէրեան, — Իմ առաջին հրատարակութիւնս. ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻ-ԱՐԵԱՆ, — Կիլիկիական նօթեր. Ատանա. ՍՍԱԿԱՆ ՎԱՐԻԱՊԵՏ, — Իրիկուն (Ոտանաւոր). Կ. ՈՍԿԵԱՆ, — Վերելք Բիծալեօն լերան վրայ. Տ. Հ. — «Բիանքօն». Նորավէպ ժողովրդական կեանքի. Ա. Մ., — Քաղաքական կացութիւն. Մ. Ն. — «Մասիս»ի Յուշատետրը Տ. Ա.

ԿՏԱԿԻ ՄԸ ՇՈՒՐՁԸ



ԱՆԷՆ ԹԷ՛ Ազգ. Պատ. րիարքարան ուղղուած անդեկադիրները եւ թէ՛ լրագիրներուն հասած թղթակցութիւնները ընդհանրապէս կը խօսին կարօտութիւններու վրայ, որոնց չեն բաւեր Նպաստից Մատուկէն յաջորդաբար զրկուած գրամները. այդ կարօտեալներուն, ազքատ-ներուն մէջ՝ հիւանդներ, անկարներ ալ կան անչուշտ, որոնց գեղ ու գարման հասցնելու հոգը ու ծախքերը կը ծանրաբեռնեն ներկա. յացող նիւթական պէտքերը. եւ սակայն, ասոր հախառակ, նորէն բնաւ խօսք չըլլար Սրբանձառեանց կտակին որուն չափ տակն էր, ու կը մնայ միշտ, հիւանդանոց մը հիւանդ վանայ մէջ. Հեռուէ հեռու, երբեմն, կա՛մ վարչական որոշումներու կարգին եւ կամ նամակի մը կամ լուրի մը մէջ անոր յիշատակութիւնը կ'ըլլայ, յաջորդ որը մոռցուելու համար. Այս յիշատակութիւնը այն.

քան տարտամ դարձած է այլեւս որ աւելորդ չպիտի ըլլար, այդ կտակին վրայ խօսելու ամթիւ, քաղուածք մը ընել անոր գոյտ թեան ու յաջորդ տարագոյններուն վրայ.

Սրբանձառեանց Գարեգին եպիսկոպոսը երբ 1892ին մեռաւ Ս. Փրկչի Հիւանդանոցին մէջ, կտակ մը թողուցած էր, — թղթի պատա-սիկի մը վրայ գրուած կտակ մը, — թէ 1000 ոսկի կը նուիրէ իր ծննդավայրին մէջ հիւանդանոցի մը հաստատման. Գրագէտ Սրբազանին ժառանգորդները, չորս եղբայր-ներ, — որոնք նուազ խղճահարութեամբ շարժելով կրնային առարկութիւն հանել կտա-կին վաւերականութեանը դէմ եւ իրենց սե-փականացնել այդ գումարը, ինչպէս գանձե-ցին ուղղակի իրենց բաժին ինկող երկրորդ 1000 ոսկին, — նախանձախնդիր հանդիսա-ցան իրենց բարեյիշատակ եղբոր փափաղին դորձադրութեանը. Այն ժամանակուան Վարչ-յութեան որոշմամբ՝ կտակուած գումարը յանձնեցաւ Բերայի կալուածոց մատակարա-րութեան Մատուկին, 100ին 5 ասկոսով, եթէ չենք սխալիր. այնպէս որ, մօտաւոր հաշուով մը, 1400 ոսկիի բարձրացած ըլլալու է է մինչեւ այսօր. Միւսնոյն տաւն, Պատրի-

արքարանի կողմէ Թանձնաժողով մը կազմուեցաւ այստեղ՝ կտակին գործադրութեանը յատուկ, եւ համանման մարմին մըն ալ Վանայ մէջ, որոնք բանակցելով իրարու հետ՝ նախ համաձայնեցան Կարմուրթի վանքը հաստատել հիւանդանոցը. յետոյ, նախապատուութիւն տուին Այգեհատանի. բայց երկու որոշումներն ալ թուղթի վրայ մնացին:

Վերջին անգամ, 5-6 ամիս առաջ, օրաթերթերը ծանուցին թէ Յայնկոյսներու եկեղեցիին շրջափակին մէջ գանուող գետինը կը արամադրուի կառուցանելի շէնքին համար, եւ թէ մինչեւ իսկ այդ թաղի ազգայինները, Յայնկոյսցիները, կը փափաքին հիւանդանոցին արտաքին մասին շինութիւնը իրենք ստանձնել, քիչ մը գրամով եւ մեծ մասամբ ալ օրմնադրութիւնը եւ ուրիշ գործաւորական աշխատութիւններ ձրիապէս կատարելով, — անձնուիրութիւն մը որ մեր ժողովուրդին հաւանիք բարեպաշտութեան մաս կը կազմէ: Ըսուեցաւ նաեւ թէ կտակարար Սրբադանին մէկ եղբայրը, Յակոբս Սրբանձտեանց, պատրաստականութիւն յայտնած է ինք իր կողմէ գետին մը նուիրել՝ եթէ գործադրութեան դուռի կտակը:

Այստեղ կանգ կ'առնէ մեր քաղաւանքին թիւը, զոր կարենալ չարունակելու համար՝ պէտք է որ կա՛մ Պատրիարքարանէն եւ կա՛մ Վանայ առաջնորդարանէն նոր անդիկութիւն մը հաղորդուի, — եթէ երբեք կայ, — թէ ինչ հետեւանք ունեցան այս բարի տրամադրութիւնները: Պէտք չկայ շեշտելու թէ

Բերայի կալուածոց Թանձնաժողովը՝ ճշգրտաբար պատուաւոր մատակարար՝ որ եւ է առարկութիւն չունի իր քով աւանդ ձգուած գրամը յանձնելու՝ երբ որ ուզուի: Ու չենք կարծել որ Յայնկոյսցիները իրենց ցցուցած ինքնաբեր յօժարութենէն պաղած ըլլան. աւանց եկեղեցիին շրջափակի գետինը պատրաստ է հոն, եւ կտակուած գումարը՝ պատրաստ է հոս. կարելի չէ՞ ուրեմն զրական ուշադրութիւն մը դարձնել այս ութ տարիէ ի վեր երեսի վրայ մնացած կտակին գործադրութեանը վրայ որ լաւագոյն պայմաններու մէջ կը գտնուի: Իրաւ, 1300-1400 ոսկին մեծ գումար մը չէ, բայց կը բաւէ առաջադրուած մարդասիրական նպատակին իրականացումը, մանաւանդ երբ հիւանդանոցին հողը ու շինութեան աշխատութեանց մէկ մասը ձրի կը նուիրուին:

Մասին կողմէ արտայայտուած այս փափաքը կամ վերջու շունչի փորձը՝ նպատակ չունի բնաւ կրկնութիւն մը ըլլալ կտակներու անգործադրելի մնալուն դէմ պարբերաբար լսուող գանդաւաններուն. ասոր համար խորհրդածութիւններով չենք ծանրաբեռներ դաշն, ու կը շատանանք իրողութիւններու շուրջը միայն դառնալով: Հանրօգուած ձեռնարկութեան մը ժամ առաջ սկսելուն իղձն է միայն որ թելադրեց մեզի այս քանի մը տողերն ալ գրելու, այն հաւատքով թէ լուրջ պատճառ մը չկայ որ տակաւին յետաձգուի Սրբանձտեանց կտակին գործադրութիւնը:

ՓՈՒՆՁ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆՑ

Ձօնեալ առ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՀՈԳԻՈՎ ՀԻՒԱՆԳ



ՈՐՈՒՆԿ վերք մը իմ սրտիս մէջը կ'արիւնի,
ու զայն անմուսնջ կ'ուզեմ կրել մինչ իմ հուսկ օր.
Կ'զգամ անդու կրծումս անոր միշտ եւս ալ խոր,
եւ քէ ինչպէս կեանքս ժամէ ժամ կը հաստի:


Միայն մէկը գիտեմ որուն ես կ'ուզեի
Բանալ սիրտըս ու ամեն ինչ ըսել անոր,
Վըզին պլլումս՝ կրնայի լալ արտասուարոր.
Այդ մին, սակայն, հիմայ հողին մէջ կը պառկի:

Ո՛վ մայր, եկո՛ւր, լրօ՛ճ ձայնիս պաղատագին.
Եթէ սէրըդ մահուան մէջ դեռ հշակէ արթուն,
Ու, զերդ, երբեմն, հոգալ կրնաս դեռ քո որդին,

Ըրէ՛ որ ալ շուտով հրաժեշտ տամ այս կեանքին
Ես մշտալնու ցանկամ գիշեր խաղաղաքուն.
Ո՛հ, խոնջ գաւակդ մերկացրնել օգնէ ցաւին:

ԼԵՆԱՌԻ

Լ Ո Ռ Ի Լ Ա Յ (*)



Բ, չք գիտեմ, տխու՛ր եմ այսքան,
Անյայտ է ինձ վշտիս պատճառ.
Ջրոյց մը հին վաղրնջական
Միտքս է ինկեր, չեբբար՝ յամառ:

Ջով է օղբ, ու կը մթնէ.
Եւ Հրահնոս հոսի անխռով,
Լեռան կատար բոցագոյն է
Արփւոյն վերջին նըշուկներով:

Հրբաշագեղ ու աննրման
Աղջիկ մը հոն վերն է նստել.
Իւր զարդքն ոսկի կը շողշողան,
Կը սանտրէ մազն իւր ոսկեթել:

Կը սանտրէ գայն սանտրով ոսկի,
Ու մի և հոյն ատեն կ'երգէ.
Կը խրոսովի երգէն հոգի,
Ա՛յնքան մոգիջ կ'եղանակէ:

Իւր կուրին մէջ նաւաժարը
Վառի տենջով մը մոլեգին.
Ա՛լ չի տեսներ խուբն ու ժայռը,
Միայն՝ ի վեր իւր աչքն հային:


Ալիք՝ կարծեմ քէ հուսկ՝ ապա
Կուլ կուտան նաւն ու նաւաժար,
Ու Լոռեայն է որ՝ կ'ըլլայ
Իրեն երգովն անոր պատճառ:

Հ. ՀԱՅՆԷ

Թարգմ. Ռ. Ե. Պ.

(*) Ծ. — Համբարում, որ, ըստ առասպելին, սեպածեւ ժայռից բարձունքէն կ'երեւէր ձկնորսներուն, Սէլ-Դոնտի մօտ, Գուլէնցի ու Պինկէնի մէջտեղ:

ԻՄ ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՍ



ԲԻ աչքիս առջեւ կը բերեմ սա պարագան թէ, Մաւխի հրատարակութեանը ձեռնարկելէս ի վեր՝ շարաթը հինգէն մինչեւ տասը ստանաւոր «զամբելը գծելու» հարկին մէջ կը գտնուիմ — որ խմբագրական արկիթերէնով անհրատարակելի յօդուածներուն կարգը դասել կը նշանակէ, — պարզապէս կը քաշուիմ խոստովանելու թէ իմ առաջին հրատարակութիւնս . . . ոտանաւոր մը եղած է: Ու յաջորդներն ալ, բաւական ատեն, լրագրութեան մէջ մտնելէս շատ առաջ, Որոշ թուական չեմ յիշեր, բայց սաշափը կու գայ մտքիս առջեւ տարտամօրէն, թէ զպրօցի գրասեղաններուն վրայ գրած քանի մը ոտանաւորներս Պարոնեանի Թատրոնին մէջ հրատարակուած տեսնելու ուրախութիւնը զգացած եմ պզտիկ հասակէս. ու անգամ մըն ալ, Թերզիմանը Էփեսար հիւրընկալած է մէկ «Ողբ»ս վաղամեռ ընկերոջ մը շիրմին ձօնուած: Հակառակ առաջնութեան իրաւունքին զոր ունին ատոնք, մաքիս առջեւ կու գայ կը սեւեռի սակայն շարքը այն ոտանաւորներուն ու արձակներուն զորս զպրօցէն ելլելէս քիչ ետքը հրատարակած եմ լուսահոգի Մինաս Գարամաճեանի Լոյսին մէջ, օգտուելով անպայման թոյլտուութենէ մը զոր այդ հին օրերու խմբագիրը՝ իր լաւ արամազրութեան մէկ վայրկեանին մէջ՝ տուաւ ինծի, երբ ներկայացայ իրեն, գրելու մարմաջս յայանելով:

— Թերթիս էջերը բաց են քու առջեւդ, յայտարարեց հանդիսաւոր ձայնով մը որ անհերքաշնակ կու գար խեղճ մարդուն հագուստ-

ներուն ու խմբագրատանը երեւոյթին հետ: Ասով հանդերձ, չլացած ու հիացած մնացի. ինչ փայթս էր խմբագիրը կամ գրասենեակը. չէ՞ մի որ թերթը, «տպագիր թուղթը» տրամագրութեանս տակ կը դրուէր. ապահովաբար մերժողական պատասխան մը պիտի ստանայի Իւթիւճեանէն որուն համար կ'ըսէին թէ շատ խիստ է սկսնակներուն հանդէպ ու իր Մաւխին էջերը դիւրամատչելի չընելու քանի մը անգամ մինչեւ դուռը գացեր էի Նօրօ խանին, առանց վեր ելլել համարձակելու. Սիւմուլիւլիս խանը աւելի ներողամիտ միջաւայր մը կ'երեւար Գափամաճեանին խմբագրատունը, — նոյն այն սենեակը ուր կը խմբագրուի այսօր զաւելտաթերթ Լոյսը, — մեր վերջին երեք-չորս տամեակ տարիներու լրագրական պատմութեան համար իր նշանակութիւնը ունի, վասն զի յաջորդաբար հոն աշխատեց, գրեց, սրբագրեց, խմբագրական կեանքի պայքարը մղեց են Օգսէն Խօճատարեանը, Յակոբ Պարոնեանը, Նիկողոս Թիւլպէտճեանը, եւ անցած գացած ուրիշ հրատարակագիրներ ալ անշուշտ. անոնցմէ իւրաքանչիւրը՝ իր օրուան յօդուածին ու օրուան քանչիւրը՝ իր օրուան յօդուածին տառապիւր է այդ կամարաւոր ու մթին խուցին մէջ որ խորհրդապահ վկան եղած է անոնց հալուածային:

* * *

Այն թուականին, ուր հազիւ տասնըվեց տարեկան պատանի՝ սաք կը կոխէի այդ սեմէն ներս, Մինաս Գափամաճեանը իր լքուած ու առանձին թողուած մէկ շրջանին մէջ կը գտնուէր, — թէեւ, հակառակ պարագաներու մէջ ալ՝ երբեք փայլուն օր չէր տեսած ու չը տեսաւ ճակատագրային զժառղութեամբ մը որ զինքը «անկեալ մարդ» մը դարձուց միշտ Ամիաներ անցնելէ ետքը միայն թափանցեցի գաղանիքին, թէ ինչ տրամագրութեամբ այնքան հաճոյակատար ընդունելութիւն մը ըրած էր իրեն ներկայացող անձանթ տղուն. նիւ-

թագէս ստատիկ նեղուած , ու թերթը լեցրե-
նելու համար «նիւթ»ի կողմէ ալ նեղուած ,
այս երկու հոգեբէն գոնէ երկրորդը մէկուն
վրայ բեռնել կ'ուզէր , թէեւ ինք աւելի պիտի
փափագէր որ առաջինը ստանձնող մը գըտ-
նուի , — յաւիտենական իտէալը հայ խմբա-
գիրներուն :

Բան մը չյայտնեց սակայն իր ներքին
մտմտութեան , եւ ինքնապատահ շեշտով մը .

— Զրի աշխատակցութիւն չեմ ընդունիր ,
յարեց , ձեր բոլոր գրածները , թարգմանած-
ները պիտի վճարեմ տողի հաշուով :

Այս երկրորդ յայտարարութիւնը առաջի-
նէն աւելի անակնկալ մը եղաւ ինծի՝ որ գա-
ցեր էի մէկ-երկու ոտանաւորներու հրատա-
րակութիւնը միայն խնդրելու , — սիրային
անմեղ գրուածքներ որոնց մէջ «գեփիւսի ,
սոխակի ու վարդի» առատութեան մը տակ
փորձեր էի սահեցնել յայտատրոփ զգացում մը՝
դրացուհիի մը ուղղուած :

Ո՛հ , այդ ոտանաւորներէն առաջինին հրա-
տարակութիւնը , ի՞նչ անքուն գիշերներ ան-
ցընել տուած է ինծի : Երեք օրը մէկ անգամ
կը հրատարակէր , կարծեմ , Լոյսը այն ա-
տեն , ու այդ երեք օրերու միջոցին կեանքիս
էն տենդոտ , էն երջանիկ ժամերը ապրած
եմ : Երբ ծերուկ զրաշարը , որուն յանձնած էր
«Խմբագրապետ Տէր»ը ձեռագիրս , յաջորդ առ-
տուն առջիս պարզեց ոտանաւորիս փորձը ,
թաց թուղթի վրայ , կոկուած , ձեւաւորուած ,
« ոտքս գեանէն կարած » զգացի . սխալ-
ները չէի տեսներ , ու տառերը ոսկեզօծ կ'ե-
րեւային աչքիս : Գափամաճեանը այդ միջո-
ցին զբաղած էր իր «առաջնորդող յօդուած»ը
գրելու , քրտնաթոր ճակատը սեղանին վրայ
հակած ու սիկառի ծուխի յորձանքներ արձակե-
լով իւրաքանչիւր տողին . կ'ուզէի շնորհա-
կալութիւն յայտնել իրեն , բայց չի համար-
ձակեցայ . զրաշարին ձեռքը սեղմեցի ու վար-
իջայ , Դեռ քսանըջորս ժամ սպասել հարկ էր ,
թերթը հրապարակ ելած տեսնելու համար :
Գինովի պէս անցուցի այդ գիշերը : Վերջա-
պէս հասու «ըղձալի ժամը» , մինչեւ Սիւմ-
պիւլիւս խան երթալու համբերութիւն չու-
նէի , երկու թերթ գնեցի ձամբան , ու գաղ-
սագողի՝ աչք մը անցի տեսնելու համար

վերնագիրը ու ստորագրութիւնս . այդքանը
կը բաւէր :

Իրիկունը , ընտանեկան գումարումի մը
մէջ , մանկահասակ աղջիկ մը — որ բոլոր ըն-
թերցողներուն մէջ միակը պիտի ըլլար ոտա-
նաւորիս ոգիին թափանցող — խօսակցութեան
մը մէջտեղ ըսաւ կիսատ ձայնով մը ու ժըպ-
տուն .

— Այսօր Լոյսին մէջ ոտանաւոր մը ու-
նէիր . . .

Ի՞նչ պատասխանելու չգիտցայ . ու այդ
վայրկեանին , Մինաս Գափամաճեանին բարե-
միտ դէմքը կը նկարուէր աչքիս առջեւ՝ բա-
րերարի մը պատկերին պէս :

* * *

Յաջորդ առտուն , չունչս Սիւմպիւլիւ
խան կ'առնէի , այս անգամ թարգմանութեամբ
մը լեցնելու համար այն էջը զոր Գափամաճ-
եան իմ արամադրութեանս ներքեւ գրած էր ,
չի մոռնալով յիշեցնել ատեն ատեն «պիտի
վարձատրեմ զքեզ» — թէեւ ես ինքզինքս վար-
ձատրուած կը զգայի արդէն . միւս չարթուն
դարձեալ ոտանաւոր մը գետեղեցի . յետոյ
զանազան հատուածներ , աջէն ձախէն , ու
երբ գրելիքներս սպառեցան , պզտիկ վիպա-
սանութեան մը թարգմանութիւնը , թերթ-
նաձեւ Աշխատութիւնս կը շատնար հետզհետէ ,
ու շարաթը քանի մը անգամ . Օրթագիւղէն
մինչեւ Չաքմազճըլար կ'երթեւեկէի հետիոտն ,
առանց բնաւ համարձակելու գրամի խօսք բա-
նալ . երկու ամիս մը անցաւ այսպէս , եւ օր
մը բուն ճիգ մը ընելով ինքզինքիս վրայ .

— Մինաս էֆէնտի , թերհաշիւ մը կրնա-
յի՞ք տալ . . .

— Գաւառային բաժանորդներէ գրամ կը
սպասեմ , պատասխանեց ինքնապատահ ձայնով
մը , այս բօսթային թերեւս հասնի :

Բօսթաները կը հասնէին , բայց Գափա-
մաճեանին բաժնեգիրները — իրաւ կամ մտա-
ցածին — չէին հասներ : Իրական կեանքի
գիտակցութեան այս նախափորձը արդէն իսկ
հոյաթափ ըրեր էր զիս ոտանաւորէն . ար-
ձակա ալ շատ չգիմացաւ այդ անվարձ-խըմ-
բագրութեան , ու թերթօնը աւարտած օրս
հրաժեշտ առի Գաբամաճեանէն որ ցաւագին

չեշտով մը ըսաւ — «Այս ասպարէզը տպերոխտ ասպարէզ մըն է . նայէ՛ որ ուրիշ գործ մը գտնաս , աղաս» :

Բաւական տարի ետքը , երբ Արեւելքի խմբագրատան մէջ կը տեսնէի Լոյսի նախորդ խմբագիրը — նախորդ «պատուակալ» patron — որ կու գար իր դասագիրքերուն ու «Հաւաքա. ծու»ներուն ծանուցմանց հրատարակութիւնը խնդրելու , առաջին ռոտանաւորիս հրատարա-

կութեան անոյշ յիշատակը կ'արթննար մտքիս մէջ , ու կը ջանայի կարելի եղածին չափ հա. ճոյակատար ըլլալ խեղճ Մինաս Գարամանեա. նին նկատմամբ , որ քովս կը նստէր ու կը խօսէր իր հին օրերուն վրայ : Մինչեւ վերջը իրեն բարեկամ մնացի , ու օրին մէկը ճշմա. րիւս ցաւով մը իմացայ իր մեռնիլը ասքատու. թեան մէջ — որ իրմէ անրաժան եղած էր իր խմբագրի կեանքին սկիզբէն մինչեւ վերջը :

ՏԻՒՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԿԻԼԻԿԻԱԿԱՆ ՆՕԹԵՐ

Ա. Տ Ա. Ն Ա.



ԻԼԻԿԻՈՅ կաթողիկոսական ընտրութեան առթիւ այժմէ. թիւն կ'անէ այս քաղաքը ուր յառաջագոյն ալ կաթո. ղիկոսական ընտրութիւններ տեղի ունեցած են : Մաւխի ընթերցողներուն համար շահե. կան կրնայ ըլլալ ուրեմն հակիրճ անդադրա. կան մը :

Ատանա ընդարձակ դաշտի մը մէջ Սէհան գետին ափերուն վրայ շինուած բազմամարդ քաղաք մըն է : Հիւսիս-արեւելեան կողմէն զինքը կը շրջանակեն ի հեռուստ Տօրոսի ձիւ. նապատ լեռները եւ մայրիներու տարածու. թիւնները. իսկ հարաւ-արեւմտեան կողմէն Մի. ջերկրական ծովը իր թուխ կապոյտ ալիքնե. րով : Երկաթուղին Ատանան ծովեզրին հետ կը կապէ երեք ժամ հեռաւորութեամբ միայն Մէրսին , որ Ատանայի ծաղկեալ ու էն բա. նուկ նաւահանգիստն է , հետզհետէ եւրոպա. կան նաւահանգիստի մը երեւոյթը կ'անէ :

Մէրսինի Կոզնէ ըսուած ամառանոցէն շատ հիմնալի տեսարան մը ունին Ատանայի ընդարձակ դաշտերը , մանաւանդ երբ օդը ան. մշուշ ու պայծառ է . նոյն անուշ տեսարանը

ունի Միջերկրական ծովն ալ որ անդադրում համրոյրներ կու տայ այդ կանանչադարգ ու թաւաթուփ անտառներով ծածկուած ա. փունքներուն : Մերսինէն մինչեւ Ատանա եր. կարող երկաթուղիի գծին առաջին կայարանն է Կոսիկոսի կիրճը ստնոյ ճամբան զոր տե. զացիները կ'անուանեն Կիւլլէֆ Պողազը : Իսկ երկրորդ կայարանն է Տարսոն , Սրսոյն Պօ. ղոսի եւ Ներսէս Լամբրոնայի ծննդավայրը . շինուած է հռչակաւոր Կիւլնոս գետին վրայ եւ Կիլիկիոյ էն հին քաղաքներէն մէկն է . այստեղի նշանաւորագոյն շէնքն է հսկայ եւ հինաւուրց մզկիթ մը :

Տարսոնի կայարանին մէջ շոգեկառքերը կը փոխեն իրենց գիծերը , ուսկից 1½ ժամ կը տեւէ մինչեւ Ատանա , սրովհետեւ Տարսոն Մէրսինի եւ Ատանայի ճիշդ մէջտեղն է : Եր. կաթողիկի կայարանէն մինչեւ քաղաք սքան. չելի խճուղի մը շինուած է եւ կառքերով 10-15 վայրկեանէն արդէն քաղաք մտած կ'ըլ. լաս , որուն շէնքերուն մեծ մասը գեռ հին շինուածքներու նմոյշներ ցոյց կու տան Քա. ղաքը ամէն կողմէ շրջապատուած է մրդա. ւէտ պարաէզներով եւ ողկուղաւէտ այգեա. տաններով :

Ատանայի արեւելեան կողմէն կ'անցնի Սէ.

հան գետը որ տեղ տեղ ընդլայնումներ ընելով՝ հանդարտ լճակի մը երեւոյթը կ'առնէ եւ յետոյ կ'անցնի նեղուկով ու բարակնալով այն հսկայ եւ քարաշէն կառուրջին տակէն որ ցոյց կու տայ զէպի Սիւս տանող ճամբան, գրեթէ միօրինակ հարթ մակերեւոյթի մը վրայէն : Ատանայի կառավարական պաշտօն եաներուն եւ տեղացի հարուստներուն բոլոր տուները Սէհանի եզերքը շինուած են խիստ փառաւոր ու երոպական ճաշակով : Իսկ Հայերուն տուները կը գտնուին աւելի քաղքին կեդրոնները, որուն էն բարձր մասն է Թեյիէ Պաղ կոչուած թաղը : Կոս է քաղքին մայր եկեղեցին՝ Ս. Աստուածածին անուամբ, Հայերը ունին նաեւ վարի թաղը Ս. Ստեփաննոս եկեղեցի մը որուն կիցն է Աշխենեան հոյակապ աղջկանց վարժարանը, որ շինուած է Վեհապետեան Տ. Մկրտիչ եպիսկոպոսի առաջնորդութեան ժամանակ :

Ատանայի Հայերը թէեւ հայախօս չեն, բայց շատ նախանձախնդիր են իրենց դաւըրներուն զարգացման ու դաստիարակութեան : Բաւական կանոնաւոր վարժարան մը ունին Արգարեան անունով, ուսկից 15-20 տարիներէ ի վեր ելած բոլոր աշակերտները շնորքով հայերէն կը խօսին : Ատանացիները կը ստանան գրեթէ Պոլսոյ բոլոր թերթերը, որով կրնայ հասկցուիլ իրենց գրական եւ ընթերցասիրական ճաշակն ալ : Արգարեան վարժարանին սաները ունին նաեւ մասենագարան մը միեւնոյն վարժարանին մէջ : Ատանայի կրթական գործին մէջ մեծ աշխատութիւն ունեցած են Յարութիւն էֆ. Պէտէլեան եւ հանգուցեալ Սարգիս էֆ. Գազանճեան որոնց աշակերտներն են Յովհաննէս էֆ. Ապաճեան, Պետրոս էֆ. Ուրֆալեան, Վահան էֆ. Քէշկէկեան, Միսաք էֆ. Գազազեան, եւ ուրիշ շատ մը զարգացած երիտասարդներ որոնց ոմանք ուսուցիչ են եւ ոմանք այլեւայլ պաշտօնի վրայ ու շատերն ալ պատուաւոր վաճառականներ :

Ատանայի ժողովուրդը մեծ մասամբ երկրագործ եւ վաճառական է. եւ արհեստաւորներն ալ մեծ մասով մերոնք են : Բայց ո՛չ կրթական եւ ո՛չ ալ վաճառականական ու երկրագործական տեսակէտով պէտք եղած կա-

րեւոր յառաջդիմութեան քայլերը չեն առած ըստ պահանջմանց ժամանակի եւ պարագայի :

Թէեւ երկրագործութիւնը իր նահագետական ձեւին մէջ չէ մնացած եւ տեղացիները հերկելու, հնձելու ու իրենց կալորայքը կամ սելու գործիքներ բերել տուած են, սակայն դեռ ատոր մէջ ալ գոհացուցիչ պայմանները կը պակսին : Ատանացի երկրագործը իր վարուցանին մէջ դեռ պէսպիսութիւն դնել չէ ուզած կամ չէ կրցած. իր այն սքանչելի հողերէն միմիայն ցորեն, դարի եւ գլխաւորաբար բամպակ սպասած է, մինչդեռ կրնար օգտուիլ անոր արգասաւորութիւնէն՝ մշակելով դեանտինձոր, այնպէս նկատի առնելով շերամարութիւնը ու հաւարութիւնը եւ ուրիշ այս կարգի երկրագործական օգտակար աշխատութիւնները : Եւ եթէ Ատանացիները կարենային օգտուիլ Սէհանի առատ ջրերէն՝ երկրագործութիւնը աւելի առաջ տարած պիտի ըլլային եւ երաշտութեան ժամանակ քիչ պիտի նեղուէին կամ ընտա :

Ատանացիները շատ հիւրասէր, նոյնպէս եկեղեցասէր են. կը սիրեն լաւ քարոզ մտիկ ընել՝ պայմանաւ որ իրենց հասկցած լեզուովը արուսի այն : Իբր կեդրոն դաւառ մը՝ Ատանայի ժողովուրդը դեռ շատ քիչ նորաձեւութիւններ, նիստ ու կացի փոփոխութիւններ ընդունած է. դեռ հաւատարիմ են նոյն իսկ իրենց հին հագուստ ու կապուստի մասին : Դրամօժիտի ագեղ սովորութիւնն ալ մուտ չէ դրած հոն, թէեւ շատ պարապ ծախքեր ալ կ'ընեն հարսնիքներու միջոցին : Ատանացիները աւելի ուշագրութիւն կ'ընեն աղջկան մը բնական գեղեցկութեանը, ընտանեկան ազնուութեանը եւ առօղւութեանը, ինչ որ հոգեկանին ու մտաւորականին մէջ շատ չեն փնտռեր : Ատանա թէեւ ամառը (մայիսէն սկսելով) բուսական տաք կ'ընէ, բայց տեղացիները գրեթէ բոլորովին կը քաշուին 1-2 ժամ հեռաւորութեամբ իրենց այգեստանները. հարուստ դասակարգը շաբաթը մէկ քանի անգամ միայն քաղաք կ'իջնէ. իսկ խանութպան կամ արհեստաւորներ ամէն օր :


Յաջորդ յօդուածով կը խօսինք Սիւս քաղքին վրայ ուր կը գտնուի Կիլիկիոյ կաթողիկոսական աթոռը :

ՈՒՂԵՒՈՐԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

— 330 —

Դ.

ՎԵՐԵԼՔ ԲԻԾԱՏԼԵՐՆ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ



ԵՐ պատշաճներուն մէջ պանդոկի շրջականներէն երբեմն կը հետանայինք . այսպէս օր մը ոտքով իմ եկած ճամբովս Բէֆէրս գացինք , անկէ ընտկան կամուրջէն անցնելով լիբան պատուածքին մէջէն Ռակաց մտանք ուսկից Բէթէր՝ կառքովը՝ զմեզ պանդոկ վերադարձուց : Այդ շարժումն կիրակին , 2 օգոստոս 1891 , մեծ չարժուժ կար Ռակացի եւ բովանդակ Զուիցերիոյ մէջ . տօնի մը առթիւ : Մենք ալ խմբովին՝ տանաէր եւ հիւր , կէսերնիս հետիոտն , կէսերնիս ալ Բեթէրին կառքովը քաղաք իջանք : Ռակացի դաշտը հանդիսավայր դարձած՝ ամբողջ ժողովուրդը աւ օտարականները կ'ընդունէր իր կանանչագեղ դորգերուն վրայ , ուր համեստ , վայելուչ խրախճանութիւններ տեղի կ'ունենային , արժանի հելուետական շինական ու լեռնական պարզութեան . բողբոջականաց եկեղեցւոյն կանաչէն տարածուող մարգին վրայ , բաց օդին տակ , թատերաբեմ մը բարձրացուցած էին համակ ծաղիկներ տերեւ , ուր մանչեր ու աղջիկներ զոյգ զոյգ , Զուիցերիոյ նահանգներուն թուով եւ ուրոյն տարազով այդ հանգէսը յիշեցնող խաղեր ներկայացուցին : Իրիկունը , Բէֆէրս գիւղէն խել մը գեղացիներ եկան մեր պանդոկին սարահարթին վրայ լեղունեցան՝ գիշերուան լուսավառութիւնները մեր բարձունքէն դիտելու համար : Առջեւին , վարը , քաղաքը լոյսերու մէջ է . ասկէ անկէ հրթիռներ կը բարձրանան օձապտոյտ , որոնք

օդին մէջ էլայթելով մանիշակագոյն , կապուտակ ու գեղին կանթեղներու հոյեր կը թափթըփեն մինչեւ մեր ոտքերուն առջեւ , մինչեւ մեր ուսերուն վրայ , երգերու , ալէլուեաներու , հառաչներու միջեւէն , զորս գործիական ու ճայնական երաժիշտ խումբեր գիշերային զով հովիկի մը միջոցաւ մերթ քով մերթ գէպի մեզ կը բերեն : Քոչլէնհօֆի պանդոկի պարտէզէն , որ քաղաքին կեդրոնն է , ելեկտրական լոյսեր կ'արձակեն բարձունքներուն վրայ , շառաւիղները մէկ լեռնէն յանկարծ միւսին ուղղելով երբեմն զմեզ ալ ողողելով չլացուցիչ լոյսերու մէջ : Երկինք ամպամած է , կարծես այս երկրային լուսաւորութիւնը ինք իր լոյսին հետ անմրցակ թողելու համար . բայց երկինքը կարող չուրջանակի բարձունքներուն ամէն մէկ դադարին վրայ մէյ մէկ լոյս կը փալթիլի հարկոնին վրայ բարձրացող մոլորակներու պէս , զորս հովիտներու մէջ բնակող լեռնայիները զետեղած են , այդ վեց դար առաջ անցած գացածներուն մեծաշուք վիաներն ալ մասնակից ընելու իրենց տօնախմբութեան : Մեր բարձունքին կուշտերը ծածկող անտառներու մէջերէն լոյսեր կը անտնուին եւ ահա խումբ մը երիտասարդներ ձեռքերնին մէյ մէկ ջահ՝ անտառներէն զուրս ելելով կառուղիին վրայ կ'երևան : Ասանք ջահագնացութիւն մը կը կատարեն Վարլընշթայն — Բէֆէրս — Թամինա ճամբուն վրայ . երբ մեզի մօտեցան , երբ մը սկսան երգել ճամբանին շարունակելով , որուն մեր սարահարթին վրայէն՝ գիւղացիներն ալ սկսան մասնակցիլ եւ ստանական ձայներ օգը կը թնդայնէին : — Բայց այս երգը ծանօթ է ինձի . օ՛ , այս ի՞նչ է . զարոցական երգ մը զոր մենք՝ աշակերտներս Խաղիւղի Ներսեսեան վարժարանին՝ կ'երգէինք ատենօք : Այո՛ , նոյն եղանակն է , եւ

այս խորագրեցիկ՝ թաւ ձայները , մանկական անուշ յիշատակներու խառնուած , հոգեոյս խորը թափանցեցին , ամբողջ մարմինս ցնցեցին , աչքերս լեցուեցան եւ ես ալ սկսայ իրենց հետ երգել որչափ որ կը յիշէի այդ երգին բառերը : Անշուշտ եւրոպացի երգահանները չէ որ մեզմէ առած էին , այլ մեր վարժապետները՝ որ այդ եղանակին վրայ յարմարեցնած էին գրորոցական մեր երգը , Գրիգոր Լուսաւորիչի ձօնուած :

Երեքշաբթի առտու կանուխ Աննա Մառ կոնէթնպէրկ գիւղակին ճամբան բռնեալ կ'երթայի , գուարթ , թեթեւ , Պէթէքէրը մէկ ձեռքս , ցուպը՝ միւսը , քայլաչափով , ջերմաչափով , կողմնացոյցով , բարձրաչափով զինուած : Բիծալէօն լերան զազաթը տիտի ելլեմ : Երէկ , պանդոկի հիւրերուն հետ այս վերելքը կատարել փորձած էինք , զոր պտւան Պիտէր յիմարութիւն անուանած էր գաղթին անմատչելիութիւնը զգացնել տալու համար . արդարեւ , առաջնորդի՝ Ըօֆուրթեմը մինչեւ լերան կուշտը բարձրացանք , բայց անկէջ վեր փափուկ սեւը « ոչ կարեմ » զրաւ իրեն յատուկ անհամբեր փութկոտութեամբ , առանց որու թերեւս մենք , միլիօնատէրն ու ես , առաջինը ըլլայինք անկորողութիւնն յայտնող հանգէպ սոսկալի ցիցի մը որ լերան կուշտէն առջեւին կը բարձրանար վարէն վեր , որուն վրայ մագլցելու համար կոխելու եւ կառչելու չունէինք ուրիշ միջոց բայց միայն իրարու վրայ տեղ տեղ ժայռին մէջ փորուած աստիճանները , զանգուածը համակ լերկ էր ու ժայռոտ : Ուստի առանց ընդդիմութեան համակերպեցանք ու ետ դարձանք , թէպէտ գոհ մնացինք մեր պտոյտէն : Բայց ես միաքս դրի գալ չափուի այս ցիցին հետ , որուն նոյն իսկ զփութարմբեր վերելքը զիս իրեն կը քաշէր : Ինչո՞ւ չէ , մագլցելու վարժ էի արդէն , մէկէ աւելի վերելքներ կատարած ըլլալով , թէպէտ այս անգամ՝ Բիծալէօն իր 1430 մէթրի համաստ բարձրութեանը հետ իրաւցընէ անմատչելի ցից մը կը ներկայացնէր ինձ : 1874ին էր , Պուլկարիոյ Սօֆիա քաղաքին դաշտէն բարձրացող Վիթոյ լերան ձիւնապատ զազաթը մագլցեցայ որ 1800 մէթրի բաւական պատ-

կառելի բարձրութիւն մը ունի : 1882ին , Գաղղիոյ Օվէրն դաւառին մէջ , Բիքտու Քարիւս սէնի 1463 եւ Բիւսը Սանսիի 1886 մէթր բարձրութեամբ զազաթները հասայ , այս վերջինը հարաւային Գաղղիոյ ամենամեծ բարձրութիւնն է :

Եւ հիմայ , Աննա Մարկէթէնպէրկցի առաջնորդիս՝ Ռից Կասպառի ուսերուն վրայ կանգնած եմ , երեսս Բիծալէօնի ցիցին դարձուցած , ժայռին մէջ փորուած աստիճաններուն մէջ կոխելով՝ կամայ կամայ վեր կ'ելլեմ . ես չեմ կրնար , Ռից Կասպառը կը կոխէ , ես ալ ուսերուն վրայ յենած՝ աստիճանաբար կը բարձրանամ կէս ժամէ ի վեր , թերեւս աւելի ինչ յաղթանդամ պատտնի այս Ռից Կասպառը , լայն եւ ոսկրուտ ուսերով , այս լեռներուն հարազատ զաւակը , միայն թէ ուսերուն ելեւէջի շարժումները քիչ մը բուռն են եւ զիս կը ծածանեն . — « Բայց , բարեկամս , ամէն քայլափոխի այն կողմի ուսը բուռն կերպով կը ցընցես այնպէս որ զիս մէկ կողմէն միւսը կը ծռես հաւասարակշռութիւնս պիտի կորսնցնեմ . — Ներեցէք , պարոն , առաջուց ըսի ձեզի որ վերելքի ժամանակ հետո չխօսիք եւ կամ վախի աղաղակներ չարձակէք , կ'աղաչեմ դիտողութիւն ընելու ժամանակ չէ . փոքրիկ անզուտութիւն մը աղետաբեր կրնայ ըլլալ » : Մուկի պէս սքեցայ կառչած տեղս , բայց կ'երեւայ թէ Կասպառ ալ նեղութիւն կը քաշէր , շունչը կը լսէի որ շուտ շուտ կ'առնէր , կը ֆշար , վախը սկսաւ զիս պաշարել . մաղերոտ արմատները կը խթային եւ պահ մը թեթեւ սարսուռ մը գրլխէս մինչեւ ոտքերս իջու : Բարեբաղդաբար օդը խաղաղ է , հով չկայ , բայց արեւ ալ չկայ , եթէ անձրեւ մը բռնէ՝ զմեզ . ճիգ մըն ալ եւ անո՞ ձեռքս զազաթին վրայ դրի . Կասպառ փորձեց զիս հոն նստեցնել , ինքն ալ քովս , սարահարթին վրայ որուն արամաղիճը երկու մէթրէն եւել չկար , այնչափ ցից էր այս բարձունքը , բայց այնչափ տեղը նեղ կու դար ինծի . քանի վար կը նայէի՝ զուխս կը դառնար , կարծես վար պիտի իյնամ . տեղ մը չեմ կրնար նստիլ , ինչ խելացնոր բարձրութիւն , Աստուած ի՞մ , Լմեղք որ մշուշը պատեր է ամէն կողմ եւ բան մը չի տեսնուիր վարը :

Ամպերը՝ վերը իրարու վրայ գիզուիլ կը սկսին, մինք խոհեմութիւն կը տեսնէր վար իջնել, ուստի Կասպառի ուսերուն յանձնելով ինքզինքս, միեւնոյն եղանակաւ վար կ'իջնեմ. հազիւ թէ գաշտին վրայ ոտք կ'ոխած էինք երբ անձրեւը սկսաւ կաթիլըթիլ. Կասպառ հովանոց մը ճարեց ինձ, երբ իրենց հիւզակը հասանք ուսկից ճամբաս շարունակելով յաղթական մուտք մը ըրի մեր պանդոկը ուր ցորեկուան ճաշին զանգակը կը ժողվէր հիւրերը սեղանատան մէջ. Պոռոյտ՝ վերելքին հետ 4½ ժամ տեւած էր. բարձրաշափը զազաթին վրայ 1430 ցոյց կուտար եւ երբ պանդոկ վերադարձայ, քայլաշափիս վրայ ստուգեցի որ 15400 քայլ ըրած եմ երթ եւ եկ, լերան վերելքն ալ միատեղ հաշուելով:


Հետեւեալ օրը այս ամէնէն հրաժեշտ կ'առ-

նէի, իրերէն եւ էակներէն. Վարդընշթայի բարձունքէն սկսելով մինչեւ Թամինայի կոնակէն Էրիզէն սկսելով մինչեւ Տիկին Փօն Տէչիէն, եւ Ռակացէն կը մեկնէի՝ յուզիչ վայրկեաններով համեմուած տասնեակ մը օրուան խաղաղ ու երջանիկ կեանքի մը քաղցր յիշատակներով առի: Չէի գիտեր որ այս անուշ օրերը նաւակատիքն էին ա'լ աւելի հոգեպարար, ա'լ աւելի յուզիչ անակնկալներու, ուրոնք վերապահուած էին ինձ համար Այն Կոթարի, Կրէստնովալի, Կօրնէրկրատի ձիւնապատ հովիտներուն, մշտասառ ձորերուն մէջ եւ ասոնց զգլխիչ՝ հսկայ բարձունքներուն, ինչպէս նաեւ Քրմոյի, Լուկանոյի գեղազուարճ եզրերուն եւ մեղմօրօր կոհակներուն վրայ:

Տ. Հ.

Վ Ե Ր Ջ

“ԲԻԱՆՔՕ”Ն



(ՆՈՐԱՎԷՊ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)



ԻՐԱՐ սիրեր էին այն միամիտ սիրով ուր վախն ու խոհեմութիւնը կը ձուլուին, կը չլիթուին յաճախ՝ բարեպաշտ ու բանաստեղծական խղճմբանքի մը հետ: Զգայնոտ սէր մը, խուլ, խոր, ներքին, ուր վայելքին անուշութիւնը կար գրեթէ եւ կարօտին տրամում մոգութիւնը: մշտական երանաւէտ հայեցողութիւն մը, մանաւանդ մանչուն կողմէն, ապագայ երջանկութեան յոյսերով չփաղտած, հետեւէն հետեւ գաղափարը թէ օր մը, կարճ հասակով, խոշոր ազուոր աչքերով այդ աղջիկը իր կինը պիտի ըլլար: Այս սէրը իրեն միջավայր ու

միջոցորտ ունէր Վոսփօրի բնութեան մաքուր ու բանաստեղծական հոգին:

Հայերը քիչ էին ասիական եզերքի առ սիրուն, պղտիկ գեղին մէջ. սիրոյ տարիքը հասած կամ չանցած երիտասարդ ըլլալով միայն իրենք կային գրեթէ: Աս պարագան, զիրենք մօտեցնելէ ետքը՝ կը նպաստէր իրենց սէրը օժտելու ամէն պշտտութենէ զերծ, իտեական հաւատարմութեան, մշտաեւ իրերահալեցողութեան հանգամանքով մը, փափուկ ու ներքին: Տղան, գրեթէ երիտասարդ, ճանչցած էր աղջիկը տասը տարեկան հասակին մէջ, երբ ասոր ընտանիքը եկած էր հաստատութիւն իր գեղը: Հետեւոր ու շահախնդիր հոգածութեամբ մը հետեւեր էր այդ ապագայ խոստացող աղջկան զարգացումին, քիչ մը ան մարդուն պէս որ կը հսկէ տունկի մը վրայ որուն հասունութենէն պտուղ կամ ծաղիկ կը

սպասէ : Յարաբերութիւնները , անխուսափելի , սկսան այն վայրկեանէն երբ տղան նախաձեռնութեամբ տակ , ալ մեծցած աղջկան մէջ սէրը կրցաւ բարախել նոր ծնած կեանքի մը պէս : Ընտանիքները իրարու հետ չէին տեսնուէր , Որոշ ժամերու , առտու եւ իրիկուն , մանչը կ'անցնէր պատուհանին առջեւէն , ուր աղջիկը կը սպասէր : Կիրակի օրերը տղան իր նաւակովը ձկնորսութեան կ'ելլէր աղջկան ծովագերեայ տան առաջը . կուշտ ու կուռ զիրար կը դիմէին թաշկինակի թեւաւոր բաւրեւներով , Կը թղթակցէին սակայն :

Տարիուկէս հոտքը տղան սկսած էր տակաւ ամուսնութեան խօսք բանալ : Կ'ըսէր որ կ'ուզէ աշխատիլ , գործը — արհեստով փորագրել էր — ընդարձակել , զրամ ժողկել , որպէս զի կ'ինը կարենայ երջանիկ ընել : Միայն կը խնդրէր աղջիկէն որ սպասէ , ուրիշի հետ չամուսնանայ : Աղջիկը , գեռ սիրոյ միամիտ տարիքին , զգացական չըմանին մէջ , կը խոստանար կարծես խոստում չընողի անհոգ առատաձեռնութեամբ :

Երեք տարի վերջը տղան ինքզինքը մօտեցած կը տեսնէր իր երագին . 50 ոսկիի հեռաւորութիւն մը միայն կար իր եւ անոր մէջտեղ : Միտքը զրած էր , 200 ոսկի ժողված օրը երթալ հօրմէն աղջկան ձեռքը ուզել : Ընդունուելուն տարակոյտ չունէր . ինք ուրիշներուն պէս «թրախօմա» չպիտի ուզէր , պարկեշտ էր , աշխատող , խանութ ունէր , 200 ոսկի պատրաստ զրամ , եւ աղջկան . . . սիրտը :

Օր մը , աղջկան մայրը բռնեց գաղանիքը , նշմարեւ էր որ Սաթենիկ , որ արդէն դպրոց գացած ատենն իսկ «անանկ կրող կարդացող» մը չէր , երբեմն սենեակ կ'առանձնանար ժամերով ու «բաներ» մը կը գրէր : Տաժանելի աշխատութիւն մըն էր ափիւս խեղճ անուս աղջկան համար , կազմիկազ , իյնալով ելլելով , չգտնուած բառերու պարապներուն մէջ գլորուելով , տառապախաներու քարնդոսներուն զարնուելով , ծանր լեռ տանողի քրտնաթոր եւ սայթալքող ճիւղերով : Հարցուցեր էր անգամ մը թէ ի՞նչ կը գրէր կոր ատանկ . . . «Երբ մը միաքս ինկաւ ատէ , կը գրեմ կոր քի չի մոռնամ» պատասխաններ էր աղջիկը : Երբ

գերը կը շառնային սակայն : Առանց նորէն խօսք բանալու , մայրը սկսաւ լրտեսել աղջիկը : Տեսաւ որ թուղթերը խնամով ծածուկ տեղ մը կը պահէր : Բան մը կ'առնէր . գիշերուան մէկը , երբ աղջիկը քնացած էր , գնաց թաւգըտոցէն հանեց թուղթերը , ու էրկանը առջեւ շարեց , առանց բառ մը արտասանելու , պակուսքը պիտի , յօնքերը շարադուծօրէն պատուն , խորհուրդ կատարող քրմուհիի մը պէս ծանր ու եղերական :

— Ի՞նչ է աս , ըսաւ մարդը , թուղթերուն նայելով ուր շատ մը նախազիրներ կային միտաւ ու աւրչտկուած , ու նոր նամակի մը մաքուրը , սկսուած :

— Կարգա՛ , ըսաւ կինը առանց պատասխանելու :

«Միւսիկ իմ Գարեգին . . .

— Ա՛ս ինչ է , ըրաւ էրիկը :

— Հի՛չ , գուն կարգա՛ , հոտքը կ'ըսեմ , ըսաւ կինը խորհրդաւոր ու դաժան կերպով մը գլուխը երերցնելով :

Մարդը կարգաց , զարմանքէ արմանք գլորելով :

* * *

Ամիս մը հոտքը աղջկան ընտանիքը գեղէն մեկնեցաւ : Բնաւ երես չեկան աղջկան , Կինը համոզած էր մարդը որ իրենց ընկիւք լաւագոյն բանը , պատրուակով մը գեղը ձգել երթալն էր , առանց աղջկանը բան մը կ'առնել տալու : Պատրաստուեցան մեկնումիս Աղջիկը , շանթահարուած , գաղտուկ գաղտուկ լացաւ : Ուրիշ ի՞նչ կրնայ ընել հայ աղջիկ մը , ասանկ պարագաներու մէջ : Նամակով իմացուց սիրահարին : Խեղճին խեղճեալը եկաւ , ու առանց սպասելու որ 200 ոսկին աւրոզմանայ , գնաց հօրմէն աղջիկը ամուսնութեան խնդրեց : Բայց ի լաց մերժում մը , վախեցու նմանող բան մը , Հոս , ծնողաց բարկութիւնը իր էն խոչոր ձայները հանեց : «Սա խէզը նայէ՛ , սա «թաշքը բարձրասի»ն , իրենց աղջիկը սիրելը հերիք չէր , մէյ մըն ալ ելել ամուսնութեան կ'ուզէր կոր : «Մէկ հատիկ աղուոր աղջիկին , 200 ոսկի թրախօմայով որո՞ւ ուզէին նէ չէին խտար : Ի՞նչ փեսայ ուզէին նէ չէին առնել . . .»

Գիշերը , էրիկ կնիկ խօսք մէկ ընկէն հոտքը , եկան աղջկան առջեւ խօսք բացին :

— Քա թաքուկ , սկաւ մարդը , ասոր բան մը ըլլայ թի :

— Ի՞նչ

Մեր ծնողքները , երբ ընտանիքին չա՛նր , պատիւը պահանջէ : դերասան կ'ըլլան երբեմն : Մայրերը մանաւանդ , երբ իրենց մանչուն կամ աղջկան սիրոյ մէկ զգացումը — զոր անդիտանալ կը ձեւացնեն — ուզեն խզղել , վայրագութեան հասնող դերեր կը կատարեն :

— Հը՛ , ըրաւ մարդը մեռախօսելով , վա՛յ չունչանորդի վա՛յ :

— Է՛ չըսես , ըրաւ կինը անհամբեր . . .
Վո՛նչ կայ , ի՞նչ է եղեր :

— Ի՞նչ պիտի ըլլայ , սա հոստելը Գարեգին մը չիկա՛յ , փորագրի՛չ է ինչ է . . .

— Է՛ հա՛ , ի՞նչ է եղեր թի . . .

— Եկեր է Սաթենիկը ամուսնութեան կ'ուզէ կոր . . .

Հայր ու մայր զգուշացան նայելէ աղջկան երեսը : որ , — մինչ՛ մայր ողբերգական հեռարձակ զարմացումի մը մէջ՝ աթոռէն վեր կը ցատկէր « ի՞նչ , ի՞նչ ըսիր » պոռալով եւ հայրը կէս-ծաղրածու , կէս-զայրացկոտ , կը սկսէր պատմութեան , — տենդի կամրութիւններէ՝ եւ մահատիպ դարկութիւններէ կ'անցնէր : Սիրտը ոստում մը ըրած էր , եւ կը մնար կարծես առկախ , բարախումէ զուրկ — քար կամ սառ կորած արցունք մը :

Երբ կնկան բացագանչութիւններով ընդ-միջուած պատմութիւնը լմեցաւ , այր ու կին , թեւերին սոթտած , լիարագուկ ինկան խեղճ Գարեգինին վրայ :

Մէկ քանի վայրկեանէն , նամակներուն « սիրելիք իմ Գարեգին , քոյգ Գարեգին »-էն ուրիշ բան չմնաց գետինը՝ բայց եթէ ծաղրանկար մը , ողորմելի խամաճիկ մը , բարկեն-գանական խնդկատակութեամբ արարած մը , կոխկռտուած , քաշկռտուած , թուք ու մուրով ծածկուած :

— Վա՛յ էչու կտոր վայ , կ'ըսէր մարդը , սա « թաճը բարջութի »-ն նայէ , սա . . .

— Սա իւշկը , գէ՛մ կը բռնէր անդիէն կինը : Այսպէս կարդացուեցաւ Սաթենիկի եւ Գարեգինի սէրերուն զամբանականը :

Սիրոյ , երեք տարիները լացին :

* * *

Երիտասարդը բռնակալուած այն յամառ սէրերէն զոր հեռաւորութիւնը աւելի կը գրգռէ , յաջողեցաւ գտնել իր սիրականին նոր բնակավայրը , Բերա՛ , Բայց մէկ տարուան մէջ երկու անգամ միայն կրցաւ տեսնել զայն , պատուհանը : Աղջիկը , նախ յուզուած , յետոյ նեղուած , քաշուած էր պատուհանէն : Ա՛լ չափահաս , իր ծնողքին հլու հնազանդ , հմուկ ու խօսքմուկ , ամէն հայ աղջիկներու պէս որոնց կեանքին մէջ սէրը արկած մըն է , դիտաւորութիւն մը , թոթով շարժում մը , սրտնք լռեռեայն կը սիրեն , ու լռելեայն իրենց սէրը կը զոհեն ամուսնութեան Մողօքին , հասկցած էր թէ յիմարութիւն է շարունակելը : Անկարելի էր որ ամուսնանար այդ երիտասարդին հետ : Սկիզբները շատ տառապելէն ետքը , ա՛լ գտած էր գրեթէ սրտին հանդարտութիւնը , մոռացումին պաղ մոռիրները , քաշած երբեմնի հրաբուխին վրայ : Ընկերական նոր միջավայրը ուր կ'ապրէր հիմա , աղմկոտ ու զուարճալից , նոր էութիւն մը կ'արթնցնէր մէջը , նոր բնագոյներ , պլընու եւ հլացուելու կանացի պէտքը : Կինը կը ծնէր տակաւ իր մէջ . սիրուհին մեռնելու էր :

Տարւոյ մը չափ երիտասարդը յուսահատ սէրով մը սիրեց , մահուան պէս արտում ու հզօր : Անձնատպանութեան գաղափարներ ունէր ու վրէժի կամէութիւններ . ասոնցմէ ոչ մէկը ըրաւ , այլ աւելի բան մը , . . . ինքզինքը « խահր »-ի տուաւ : Սկսաւ խմել , մսխել , թափառիլ : Երանեալ 150 ոսկիները մէկիկ մէկիկ կը գլորէին , արիւն-քրտինքով վաստակուած , արիւն-արցունքով վատնուած ոսկիներ :

Օր մըն ալ իմացաւ որ աղջիկը ամուսնացեր է Գրիգոր Սարգիսեանին հետ , վաճառական , իրեն ծանօթ : Պահ մը մտածեց երթալ ամուսնոյն աչքին առջեւ զնել աղջկան նամակները , զորս կը պահէր . ինչպէս սնանկացած վաճառականը կը պահէ իր հին փառքէն ճառող՝ հաշուի-տետրալիները : Ի՞նչ օգուտ սակայն : Ամուսնութենէն առաջ թերեւս բանի մը ծառայէր ասիկա , հիմա ա՛լ գործը գործէն անցեր էր :

* * *

Երկու տարի ետքը , երիտասարդը , — որուն

վիշաք, սովորութեան թմբեցնող, ջլատիչ ուժովը՝ ա'լ հանդարտած էր, թէեւ միշտ՝ նախկին սիրոյն յիշատակը՝ իր կեանքին մթնոլորտին, իր ըրածին, մտածածին, զգացածին կուտար համակերպած տրտմութեան զառն համ մը — հիւանդ ինկաւ, ծանր կերպով Ծեր մայր մը եւ մեծ քոյր մը ունէր, անտեղեակ իր առամին ։ Քանի մը ամիսէն, վերջին խնայողութիւնները սպառած էին ։

Օր մը, Բերացի Տիկին մը, որ զիրենք կը ճանչնար ու երբեմն այցելութեան կուգար, հետը տարաւ ասեղնագործութիւն մը, զայն Բերա վիճակահանութեան զնեղութեամբ, ընտանեկան շրջանակի մը մէջ ։

Շաբաթ մը ետքը վերադարձաւ ։ Ժողոված զրամը, թուղթի մը մէջ փաթեց, սեղանին վրայ դրաւ ։ Բացին ։

— Աս ալ, ըսաւ, ճմաթկուած թուղթը շտկելով՝ թիւ գրուողներուն ցանկն է, 190 թիւ լեցուցի ։

Հիւանդը ցանկը ուզեց ։ Ո՞վ էին այս անձանթ երջանիկները — զրամով եւ առող-

ջութեամբ — որ կարեկցեր էին իրեն պէս կրկնակի աղքատի մը ։ Սկսաւ կարդալ, տեղ մը կարմրեցաւ ։ Ծանօթ անունի մը հանդիպելու էր ։

— Ըսի՞ր թէ որու համար է, հարցուց Տիկինը ։

— Չէ՛ ։

Շարունակեց ։ Յանկարծ, աչքերը բացուեցան խոշոր, խղզուկ բացագանչութիւն մը, սկրզուելով, ելաւ կոկորդէն ։ Թուղթը վար ձգեց ։

— Ի՞նչ կայ, ի՞նչ եղար. — չուրջը ժողովուրդեցան անձկոտ ։

— Հի՛շ, ըրաւ լռութենէ մը վերջը. ցաւս է . . . ու մնաց աչքերը գոց ։

Մնաց աչքերը գոց ։ Ու այդ մութին մէջ, որոշ կը տեսնէր նորէն երկու անունները ։

Գրիգոր եւ Սաթիւնիկ Սարգիսեան

Զորս թիւ գրուելու էին ։

Ա. Մ.

4 Փետրուար 1900

Ի Բ Ի Կ Ո Ւ Ն

Մայրիկն հակած էր խրամոտ,
Օրորոցին վերայ պզտիկ,
Ուր սիրոյն վարդը խնկահոտ
Կը գոցէր աչքն իր հանդարտիկ ։
Յոգնած եկաւ հայրիկը տուն,
Բայց նայելով մէջ մը զսուկին,
Մէյ մ'ալ երգող հարսին ժպտուն,
Լուսով լեցան սիրտն ու հոգին ։
Մոռցաւ ամեն հոգ ու ցաւեր,
Ծուները դրաւ օրբանին քով ։
Միայն համբոյր մը կը բռնէր
Զոյգ ճակատուց սիրագործով ։

Մէկն իր բոյնին խօսող բռնուն,
Միւսն ալ ձագուկն անուշաբոյր,
Արցունքներով աչքը լեցուն,
Համբոյրն առաւ, տուաւ համբոյր ։

4. ՈՍԿԵԱՆ

«ԲԱԶՄԱՎԷՊ» ՈՒ «ՄԱՍԻՍ»

Վենետիկի Պատ. Միաբանութեան ամսաթերթը իր մարտի պրակին մէջ մասնաւոր հատուած մը նուիրելով Մաքիսի նոր շրջանին ու ներկայ իմբագրութեանը, իր զատողութիւնը ու գնահատումը կը յայտնէ ներողամիտ ոգիով մը ու քաջաբերական տողերով ։ Կը փութանք մեր անկեղծ շնորհակալութիւնը յայտնել Բազմալիկայի յարգելի Խմբագրութեանը որ մեր շարաթաթերթին առաջին հինգ թիւերը միայն քննած ըլլալով՝ արդէն իսկ համապատասխան կը գտնէ զանոնք մեր ծրարորած ուղղութեանը եւ Մաքիսը «համակրելի ու օգտակար հանդիսացնելու» հաւատաւոր մը կը նշմարէ անոնց մէջ ։

Խմբագրութիւն

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆ



ԲՈՆԵՆ զօրավարին անձ-
նատուութենէն հոքը՝
Լէախմիթի ազատու
եւ Քօլէնսօ, Քոլէզպերի
ու մէկ քանի փոքր քաղաքներու Պօէրնե-
րուն կամաւ պարպելով Անգլիացիներուն
կողմէ գրաւումը՝ չարթուանս գլխաւոր զէպ-
քերն են պատերազմի թատերաւայրէն, իսկ
թէ ինչ անօրինակ խանդավառութիւն առաջ
բերած են այդ յաջողութիւնները բովանդակ
անգլիական ազգին վրայ թէ՛ Լոնտոնի մէջ,
թէ՛ Մեծն Բրիտանիոյ բոլոր երկիրներուն մէջ,
նկարագրել կարելի չէ այս անձուկ էջերուն
մէջ. միայն թէ անով կը հաստատուի որ
Անգլիացիները կարծուածն չառ աւելի մեծ
թշնամի անդ զրաժ էին Պօէրները որոնց
յաղթելը այսքան խանդավառ ուրախութեամբ
կը տօնեն:


Անգլիացիներուն զգացած այս ուրախու-
թեանց մասնակցելով՝ օտար Վեհապետներ
փոխացին հետաքրքրութեամբ թափուհին
Աւելորդ է ըսել թէ Թրանսիլիան եւ Ռուսիոյ
կողմէ միայն տեղի չունցող անհրաժեշտութեան
պաշտօնական արտայայտութիւններ, բայց
ասիկա չի ցուցնէր տօններն թէ Պօէրներուն
պիտի օգնեն Թրանսիլիան եւ Ռուսիա, թէպէս ի-
րենց մամուլը միայն կը պահանջէ այս
բանը. անոնց բոլոր Կապուտաւքները օգին
մէջ պիտի ցնդին Իսթանպուլ Լորա Ռուսիոյս
եւ Սըր Պըլլըր զօրավարները, մէկը՝ արեւ-
մուտքէն, միւսը՝ արեւելքէն, Պօէրները իրենց
երկրին ներսերը նահանջելու կը ստիպեն, եւ
Օրանի մայրաքաղաքին, Պէտօֆօնպանի,
առումը ու Թրանսիլիա մայրաքաղաքին, Բրե-
զօրիայի, պաշարումը պատերազմական ամէ-

նէն մերձաւոր գործողութիւններն են որ կը
սպասուին օրէ օր, թէպէտ Քրիւկէր նախա-
գահը յուզիչ հրամանագրով մը ի վէն կոչած
է երկրին բովանդակ ժողովուրդը, այր, կին,
տղայ, Սակայն ամէն հաւանականութիւն կը
յանդի սո անթաղութեան թէ պատերազմը
վերջանալու մօտ է եւ թէ Պօէրները այլեւս
երկար չպիտի կրնան զիմանալ յաղթական
Անգլիացիներուն ամէն կողմէ յառաջխաղաց
արշաւանքին, Պարագայ մը կայ միայն որ կը
չփոխեն մտքերը, այն է անգլիական այս-
քան յաջողութիւններէ ետք՝ թուղթերուն
կոտորիլ փոխանակ բարձրանալու, եւ Անգ-
լիացիներուն զեռ նօրանոր զօրքեր զրկելը Հա-
լաւ-Ափրիկէ ու պատերազմական աւելի մեծ
պատրաստութիւններ տեսնելը, Յիշէ այս երե-
ւոյթները իբրեւ կանխանշան մեկնուին մի-
ջազգային խառնաշփոթութեանց, ինչպէս են-
թադրողներ պակաս չեն, միւս կողմէ արդա-
րանալու մեծ պատճառ մը չունին, որովհետեւ
քնաւ հաւանական չէ որ Ռուսիա եւ Թրանսա-
լիան զօրծողութեան մը ձեռնարկեն ի նպատ
Պօէրներուն, քանի որ եւրոպական միւս մեծ
տէրութիւններէն բնաւ չի սպասուիր այդպիսի
բան մը, ըստ որում իրենց Վեհապետները
չնորհաւորելու իսկ չվարանեցան անգլիական
զօրքերուն յաջողութիւնները:

Թրանսիլիան պատերազմէն զատ, ինչ-
պէս անցեալ չարաթ ալ ըսինք, աշխարհի
ընդհանուր ուշադրութեան արժանի կարեւոր
զէպքեր չկան ծանուցուելիք. եւ Ռուսիոյ
կողմէ Պարսկաստանի մէջ ձեռք բերուած գե-
րակշիռ ազդեցութիւնը ի վնաս անգլիականին,
կամ անոր ենթադրեալ արշաւանքները զէպ ի
Հէրաթ՝ տակաւին ուշադրութիւն գրաւելու
աստիճան կարեւոր իրողութիւններ չեն. մա-
նա անդ անգլիական զէնքերուն վերջին երկու
չարթուան մէջ դրած փայլուն յաջողութիւն-
ները որոնք կ'ապահովեն դարձեալ բրիտանա-
կան հզօր ազդեցութիւնը կը նստաացնեն դիւ-
րաւ այդ կարգի զէպքերու առաջ բերելիք
սպաւորութիւնները:

Մ. Ն.

“ՄԱՍԻՍ,, Ի ՅՈՒՇԱՏԵՏՐԸ



ՀԻԱՆԴԱՆՈՑԻՆ

ՆՈՒԱԳԱՀԱՆԴԻՍԱՐ


ԻՒԱՆԴԱՆՈՑԻՆ ի նպաստ արուելիք նուագահանդէսին կազմակերպութիւնը տենդոտ գործունէութիւն մը առաջ բերած է որ կը կատարուի անձայն, անշշուկ, թէ՛ նիւթական մասին եւ թէ՛ արուեստագիտականին յաջողութիւնը հաւասարապէս յաջողցնելու համար: Երեւոյթէն դատելով, երկուքն ալ կը խոստանան գերազանցել նախորդ տարուանը, ինչ որ անկեղծ գոհունակութիւն մը պիտի պատճառէ ազգին ամէն դասակարգերուն: Երբ մէկ կողմէն անձամբ կամ նամակով գիւմուռներ կ'ըլլան ամսականներուն սպառմանը համար, միւս կողմէ գիւտակցօրէն ու ձեռնհասօրէն կ'աշխատուի եւ րապական լաւագոյն զոնսէռի մը հանգամանք տալու այս երաժշտական-բարեգործական հանդէսին: Հոգաբարձութիւնը շատ լաւ ներշնչում մը ունեցած է գիւմուռով Մարտիկ էֆ. Յակոբեանին որ մասնախումբին գանձապահութիւնը ստանձնելով հանդիւրձ ստանձնած է նաեւ յայտագրին պատրաստութեան եւ զայն գործադրութեան գնել տալու հոգը, — բան մը որուն համար անձուիրութիւնը եւ ընկերային պատուաւոր զիրք ու նենալը չեն բաւեր. երաժշտական հմտութիւն ալ պէտք է, — առաւելութիւններ զորս գերազանցապէս կը միացնէ իր անձին վրայ այդ յարգելի ու համակրելի երիտասարդը:

Որչափ որ իմացանք, նուագահանդէսին գործիական մասը ստանձնած են մայրաքաղաքիս առաջնակարգ արուեստագէտներէն Ռատէլիս, Եարօնսքի, Պրասէն, Էլինկէր, Մէրսընիէ, զաշնակի, ջութակի ու թաւջութակի վրայ նուագելու համար ընտրելագոյն հատուածներ: Իսկ ինչ որ մասնաւոր հաճոյք մը պիտի պատճառէ մեր ամէնուն, Օր. Մաքրուհի Ճանրմեանին բարեյօժար մասնակցութիւնն է որուն գովաստը ընելու պէտք չունինք: յայտնի իրողութիւն մը ըլլալով թէ այդ արուեստագէտ օրիորդը՝ ամէնէն նորաճաշակ ու զփուարահաճութեամբ պատիւ կը բերէ հայ գեղեցիկ սեռին ու հայ տաղանդին: Իր բնական amateur, Օր. Ճանրմեանէն զատ նուագահանդէսին պիտի մասնակցի հինգ օրիորդներէ ու եօթը երիտասարդներէ կազմուած նուագախումբ մը, ամէնքն ալ ջութակով: Օր. Ծաղիկեան՝ անցեալ տարուան պէս, այս անգամ ալ պիտի մասնակցի ձայնակն մասին, քանի մը զփուարին հատուածներ երգելով:

Աւելի մանրամասնութեանց մտնելը անխորհրդապահութիւն պիտի ըլլար, գիտնալով մանաւանդ որ նուագահանդէսի մը յայտագիրը կրնայ փոփոխութիւններ կրել մինչեւ վերջին վայրկեանը. եւ յետոյ, անակնկալին բաժինն ալ պէտք է վերապահել:

Այսքանը գեղարուեստականին համար, նիւթական արդիւնաւորման հոգն ալ կարող ձեռքերու մէջ կը գտնուի. Հոգաբարձութեան ժաջան տտենապետը, Պատրիկ էֆ. Կիւլպէնկեան՝ իրեն աջակից ունենալով Յարութիւն էֆ. Արսլանեանը, մէկ կողմէ, եւ Գրիգոր էֆ. Շամսանձեան, Վահան էֆ. Էսսեան, Տիրան էֆ. Կիւմուշկէրտան, Եղուարդ էֆ. Գարակէօզեան աշխատութեան կարեւոր բաժին մը ստանձնած են որմէ անմասն չեն մնար քանի մը բարեսէր ու ծանօթ Տիկիւններ: Ամենուրեք՝ իրենց գիւմուռներուն գտած ընդունելութիւնը կը համապատասխանէ նպատակին մարդասիրական հանգամանքին ու իրենց անձուէր եռանդին որոնց իրական ար-

զինքը պիտի տեսնուի Նուազահանդէօին
փայլովը ու փայլուն հասոյթովը :



Վարչական Ժողովները՝ ինչպէս Բարե-
կենդանի չարթուն՝ այնպէս ալ Մեծ-Պահքի
առաջին եօթնեակին զոր կը բոլորենք այսօր ,
ամբողջական նիստեր չըրին : Քաղ. Ժողովը
միայն կը գումարուի երբ կը գրենք այս առ-
դերը , — 25 փետրվ. ուրբաթ , — ինչպէս
նաեւ Ուսումն. Խորհուրդը որուն կազմակեր-
պած կիրակնօրեայ դասախօսութիւնները պիտի
սկսին կիրակի, Բերայի Արուեստանոցի սրահին
մէջ : Անդրանիկ դասախօսներն են Ռեթէս
էֆ. Պէրպէրեան եւ Մինաս էֆ. Ծախան :
Վկայեալ եւ ոչ-վկայեալ ամէն ուսուցիչ պիտի
կրնայ ներկայ գտնուիլ այս օգտաշատ դասա-
խօսութեանց որոնց յարաւեւութիւնը նոր
քայլ մը առնել պիտի տայ մեր կրթական
գործին :

Կիւիկիոյ կաթողիկոսական ընտրութեան
պարագաները կը շարունակեն զրադիցնել ազգ-
թերթերը՝ օրը օրին : Պատրիարքարանի ներ-
կայացուցիչը՝ Տ. Սահակ եպիսկոպոս՝ Մեր-
սինէն Ասանա ուղեւորած է ուր պիտի կա-
տարուի ընտրութիւնը : Պատրիարքարանի
կողմէ զրկուած պաշտօնաթուղթերը ու հրա-
հանգները Մէրսինի մէջ Խապայեան Սրբազանին
ձեռքը չէին հասած՝ թղթատարական յաղաղ-
ման մը պատճառաւ . բնականաբար, Մէրսինէն
Ասանա պիտի զրկուին կամ զրկուած են ար-
դէն : Այս առթիւ , մեր պաշտօնակիցներէն
ոմանք կը հերքեն այն զրոյցը , իբր թէ Ընտ-
րողական Ժողովը իր առաջին նիստը դումա-
րելով՝ ընտրելաւ ընդհանուր ցանկ մը պատ-
րաստեր է եւ թէ մինչեւ իսկ ընտրութիւնը
կատարուեր է յանձին այս կամ այն եկեղե-
ցականին :

Էրզրումի առաջն. տեղապահ Տ. Զաւէն
վարդապետ վիճակային գործերու մասին Ս.
Պատրիարք Հօր զրկած իր ընդարձակ մէկ
տեղեկագրին հետ՝ յատուկ տեղեկագրով մըն
ալ պարզած է տեղւոյն ազգայիններէն ոմանց
օրթոքութեան յարելուն պատճառները :

Սանաւարեան Վարժարանի Պոլսոյ Խնա-
մակալութեան անգամ ընտրուեցաւ Գէորգ
էֆ. Ասլանեան՝ հանդուցեալ Նուրեան էֆ.ի
տեղ :

Ս. Պատրիարք Հայրը զիր մը ուղղելով
ամենայն հայոց Ս. Հայրապետին՝ Ն. Ս. Օ-
ծութեան ուշադրութեանը յանձնած է Կիւի-
կիոյ թեմերուն եկեղեցիներուն եկեղեցական
մատենաներէ զուրկ գտնուիլը եւ խնդրած է
որ հարկ եղած զիրքերը նուիրուին Մայր-Ս.
թոռն :

Վաճաջ Լիւմ Անապոսի միաբանութիւնը
խնդրեր է Պատրիարքարանէն որ Տ. Սահակ
վարդապետ Բաղրեւանդեան որ Վանայ հոգե-
ւոր հովիւ Տ. Ներսէս . Սրբազանի՝ օգնական
կամ փոխանորդ նշանակուեցաւ վերջերս ,
չարունակէ վարել վանահայրական պաշտօնը :
Եթէ կարելի նկատուի երկու պաշտօնները
միացնել այդ արժանաւոր եկեղեցականին ան-
ձին վրայ , լաւագոյն կարգադրութիւնը կ'ըլ-
լայ բնականաբար :

Օսարուի մը , Միս Նէյվըն , որ բարե-
գործ կնոջ յիշատակ մը կը թողու մասնաւորա-
պէս Խապուզի եւ Գասրեմփաշայի աղքատիկ
հայ ընտանիքներու համար , մեծաւ նախորդ
չարթուն : Այդ երկու արուարձաններէն բազ-
մաթիւ հայ կիներ իրենց ապրուստը կը ձա-
րէին Միս Նէյվընի բացած աշխատանոցին
չնորհի :

ԳՐԱԿԱՆ ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ԳՍԻԱՍՈՍԵՒՆ ԳՊՐՈՑՆԵՐՈՒ

Սարգիս էֆ. Յովնանէսեան մէկ օրինակ տարեկան
Մասիս նուիրեց իր ծննդավայրին՝ Քզիի Խուրս զիւղի
ազգ. վարժարանին :

ԱՐՏՈՆԱՏԵՐ Կ. Ս. ԻԻԹԻԻԸՆԱՆ

Տպագրութիւն Ե. Մ. ՍԹԷՆՈՍԵԱՆ

Թիւ 27, Ֆինանսըլար եօղւշու, Կ. Պոլիս

Ի Ի Ն Ի Օ Ն

ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնուած 1828—1829 ին



ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀՐԻՆԷԻ ՃԻՒՂԻՆ
97 Միլիոն
ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿՆԵԱՅ ՃԻՒՂԻՆ
137 Միլիոն

Ընկերութեան գրամատուցն է
ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Պուլկարիոյ Տնօրէն
Սիւնն եֆ. Քայսեքլեան

Կենաց ճիւղին տեսուչ
Միհրան եֆ. Տէր Ներսիսեան

Կ. Պոլիս, Կալաթա, Փահապուրուն խան
Օսմ. Պանքային դէմ

THE INTERNATIONAL BROKER


(Ծանուցում)

Այն բոլոր վաճառականները, նաւորներ, խաւարիւններ, հնարիւններ, առեւտրական մարդիկ, կալուածատէրներ եւ մանաւոր անձեր որոնք գնելու կամ ծախելու բան մը ունին, ինչպէս տուն, շինութեան անոց, հողեր, հանքային հորեր, գործարաններ, առեւտրական տուններ, բաղնիքներ կամ զանազան ապրանքներու ծրարներ, մեքենաներ, եւայլն, ինչպէս նաեւ այն տեսակ մարդիկ որոնք կ'ուզեն ուրիշ մը հետ ընկեր ըլլալ կամ ընկեր մը կը փնտռեն, հետազոտութիւններու, առեւտրական գործառնութիւններու, սենտիքաներ եւ ընկերութիւններ կազմելու եւ կամ թէ առեւտրական որ եւ է գործ մը աշխարհիս որ եւ է մէկ մասին մէջ կատարելու համար, պէտք է որ կարգան, բաժանորդ գրուին (տարեկան 2 շիկին) եւ ագորարութիւններ տան վերը մէջուած նպատակներէն միոյն համար, կամ պատասխանեն եղած ծանուցումներու որոնք կը հրատարակուին The International Brokerի մէջ. հասցէն 11, Southamton Row, London W. C.

ՏՈՔԹ. Ե. ՄԱՍԻՍ, բժիշկ եւ մասնագէտ ջղային տկարութեանց, ստամոքսի, աղեաց հիւանդութիւններու, ծննդամիջական եւ գաղղիական ախտերու: Բերա թագսիմ փողոց, թիւ 10, ամէն օր կէս օրէ վերջը:

ՏՈՔԹ. Ն. ԹԻԻԼԵԱՆ, բժիշկ-մանկաբարձ, հաստատուած է Մաքրիքէօյ, Սաղըզ Աղաճ, Արդարեան դեղարանին դէմը: Հիւանդ կ'ընդունի ամէն օր (երեքշաբթի օրերը՝ կէս օրէն վերջ ձրի): Երկուշաբթի եւ ուրբաթ օրերը, ցորեկէն ետքը կը գտնուի Սամաթիա, իր նախկին բնակարանին քով: Կը դարմանէ ամէն տեսակ հիւանդութիւններ եւ կը կատարէ վիրաբուժական գործողութիւններ մեծ ճարտարութեամբ:

ՏՈՔԹ. Յ. ՈՍԿԵԱՆ, Կ. Պոլիս վերադարձած ըլլալով, հաստատուած է Բերա, Պէքեար փողոց թիւ 1 տունը, ուր ամէն օր՝ ներքին եւ արտաքին ամէն տեսակ հիւանդութիւններ կը դարմանէ: Հինգշաբթի, կէս օրէն ետքը, աղքատներուն ձրի:



Ն Ի Ո Ւ Հ Ո Մ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԻԱԿ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆ

Որ կը մրցի միւս բոլոր կարի մեքենաներուն հետ

ՊԱՐԶՈՒԹԵԱՄԲ

ՏՈԿՈՒՆՈՒԹԵԱՄԲ

ԱՐԱԳՈՒԹԵԱՄԲ

ԹԵԹԵՆՈՒԹԵԱՄԲ

ԱԺԱՆՈՒԹԵԱՄԲ

Թուրքիոյ համար միակ ներկայացուցիչ

ՅՈՎՀԱՆՆԷՍ Կ. ՄԻԱՆՆԵԱՆ

Եփեսոս, Սիրիոյ, Քէօքիւլիւ խան, Թիւ 3

Մասնաճիւղ, Ղարաիս, Պէտլիք Միլլէթ խան, Թիւ 33

Գնողներու համար վնասման եւ ամեն տեսակի դիւրութիւններ



ՔԷՅԻ

ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ամէնէն դժուարահան հագուելներն
անգամ գոհացնող :

ԵԱՎՐՈՒԵԱՆ

ԵՒ

ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

քէյի խառնուրդները

ԱՌՈՂԶԱՊԱՀԱԿԱՆ

ըլլալու յաջութիւնը եւս ունին :



Եալիուեան և Իսա-
գուլեան թէյի խառ-
նուրդներու վաճառա-
տունը կը գտնուի Կ.
Պօլիս, Ճէլլալ պէյ
խանին տակ, Թիւ 10 :

Ուշադրութիւն վաճառատան մարխային

Գ. ՊԱՂԱՊԱՆՈՒՄ

ԱՇՆԱՆ ՏԵՐԵՆԵՐ

(Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ)

Ամենքն անօթեմ ծնողներն իսկ, առանց խղճահարութեան կրնան իրենց
զաւակաց յանձնարարել այս գիրքը, որ խիստ չափաւոր եւ համեստ լեզուով
կը խօսի եւ գործնական պարմաններ ցոյց կուտայ ընտանեկան յարկերուն տակ
ոլորակ նախկիններ գործող եւ գրեթէ տարագործիկ համաճարակի մը հանդա-
մանքը ստացող աղջիկ յատուկ վառ ունակութեան մը վրայ, որ դեռապիկթ
պատանիներն ու ծաղկեցող երիտասարդները կը թառամեցնէ, Արդէն երկրորդ
տպագրութեան արժանանալը ինքնին ցոյց կուտայ գործին օգտակարութիւնը.
հետեւաբար ջերմայէս կը յանձնարարուի ամէն պատկազով ընթերցողներու :

Գլին 4 դուր

Կերոնեստիլին Ե Յ. ՄԱՏԹԷՆՈՍԵԱՆ վաճառատունը, քիւ 27, Ֆիկնա-
նըլար եօղուշու, Կ. Պոլիս, կը գտնուի ամեն քաղաքներու քով :

ԿԻՍԱՄՍԵԱՅ “ՄԱՍԻՍ” Ի 1899Ի ՏԱՐԵՇՐԶԱՆԸ, 608 կրկնատիւնակ էջերէ
բաղկացած, ճոխ ըովանդակութեամբ, իբր ամբողջական հատոր մը թղթակազմ, հրա-
պարակ եղած է եւ կը ծախուի ամէն դրամաձառի քով, Կեդրոնատեսդին է Յ. ՄԱՏԹԷ-
ՆՈՍԵԱՆ Տպարան, Գինն է 40 դրշ. : Գաւառներէ ուղղորդողը պէտք է 5 դրշ. աւելի
վճարեն իբր թղթատարի ծախք :